

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՌՈՒՍԱՀԱՅԵՐԻ ՄԵԶ

1900 Թ-ԱՒԻՆ

II

Բանաստեղծութիւնը նոյն դիրքն ունի գրականութեան մէջ, ինչ որ կինը հասարակութեան մէջ.—Նրանն է առաջին տեղը և առաջին ողջոյնը: Եւ ինչպէս ամենատգեղ կինը, այնուամենայնիւ, պատկանում է գեղեցիկ սեռին, այնպէս էլ ամենաանհամ վէպն ու ոտանաւորը պատկանում են գեղարձնեստական գրականութեան:

Անցեալ տարուայ ընթացքում առանձին գրքոյներով տպուած ինքնուրոյն գեղարուեստական գրուածքները,—արտատպութիւնները և կրկնատպութիւնները մի կողմ ենք թողնում, —կարելի է, բառի բուն նշանակութեամբ, հաշուել մատների վրայ.—1) Ա. Ահարոննեան. «Նորածինը» տպուած նրա «Պատկերների» ժողովածուի մէջ, որի պարունակած միւս բոլոր պատմածքները հրատարակուած են 1900 թուից առաջ և արտատպուած են «Մշակից». 2) Սմբատ Մ. Գարագաշ. «Մեշաղի եղիսաբէթ», վէպիկ. 3) Արամ Չարզը. «Բանաստեղծութիւններ», որոնցից մի նշանաւոր մաս արտատպութիւն է. 4) «Զիւանուքնարը» հատ. I. 5) Ե. Բաղդասարեան. «Քնար մուգայի». 6) Գ. Զառափեան «Ուկեհեր տղան և իմաստուն աղջիկը» հեքեաթ, և 7) Փառնակէս. «Նիսիա», վօղբվիլ: Երկու վիպական գրուածք, երեք՝ բանաստեղծական, մի հեքեաթ և մի վօղբվիլ ընդամենը ոչ աւելի քան մօտ 550 փոքրադիր էջ,—ահա անցեալ տարուայ ոռոսահայ գեղարուեստական գրականութեան ամբողջ հաշուեկիւը, եթէ ի նկատի չունենանք պարբերական հրատարակութիւնները:

Սկսենք վիպականներից:

Պ. Ահարոննեանի «Նորածինը», որ գրուած է 1900 թուից առաջ, պատկանում է նրա այն գրուածքների շարքին, որոնց նիւթը վերցուած է թիւրքահայ գաղթականների կեանքից: Այդ գրուածքներն են կազմում պ. Ահարոննեանի գրական ժողովըր-

դականութեան հիմքը: Մեզ թւում է, թէ «Նորածինը» ոչինչ չի աւելացնի այդ ժողովրդականութեանը, նա պատմուած է զաղթականի բերանից, բայց գրքի ոճով:

Պ. Ս. Մ. Գարագաչի «Մեշադի Եղիսաբէթը», մի անգրագէտ գրուածք է, զուրկ որ և է գեղարուեստական արժանաւորութիւնից:

Յանաստեղծական գրուածքներից «Մուրճի» մատենախօսական բաժնում արդէն յայտնուել է «Մուրճի» խմբագրութեան կարծիքը պ. Արամ Զարբգի «Բանաստեղծութիւնների» մասին:

Ծանր տպաւորութիւն է գործում «Զիւանու Քնարը»: Երեք հատ աջող ոտանաւորներ—«Աշխարհը», «Խելքի աշեցէք», «Եղած չեղած մէկ հաշիւ է»,—մի ամբողջ հատոր անածող, անհամ և անհոտ ոտանաւորների մէջ, որոնցից շատերը անիմաստութեան կողմից կարող են մրցել մեր նոր փետրաւորուած դէ, կադէնտների արձակ և անարձակ բանաստեղծութիւնների հետ: Ինչպէս զիտէք, պէտք չէ անպատճառ ճգնաւոր լինել արջի ծառայութիւններ ստանալու համար: Պ. Զիւանին յայտնի էր մինչև այժմ իբր համեստ, բայց համակրելի և բաւական ժողովրդականութիւնների ուզել են նրան ծառայութիւն մատուցանել, սկսելով տպել գրեթէ այն բոլորը, ինչ որ երբ և իցէ դուրս է եկել նրա բերանից, թէկուզ այդ նոյնքան իմաստ ունենայ և նոյնքան գեղարուեստական արժանաւորութիւն, որքան ժողովրդական դէկադէնտութեան կլասիկական երկտողը. «Ապէլսին, ապէլսին, Մուխթար փաշին խարեցին»:

Ամբողջապէս նոյն դէկադէնտութեան արդիւնք է և պ. Ե. Բաղդասարեանի «Բնար մուզային»: Տարօրինակ մարդ է պ. Բաղդասարեանցը.—Նրա ծնունդը եղել է ոչ միայն սե, այլ և կապոյտ (եր. 7), նա սիրել է «հրավառ աչեր կենարար հոտով» (եր. 5), նա «ցնորքներ է մտածում» (եր. 6), նրա վշտերը շատ են և նրան միմիթարել «չեն կարող նոյն իսկ թևաւորք անթեք». նա լսում է թէ ինչպէս «երկիրն էլ յոդնած, քնած խըռըմփում է» (եր. 15) և ինչպէս «թոռուցիկ հանդարտ, զովարար հովը սուլում էր հանգիստ» (եր. 16). եր սիրուհուն անիծելիս նա ուղղակի սարսափելի է. «Եւ հրէշաւոր որդեր և դներ կ'կըրծեն սիրտդ երկար տարիներ»... «Հիւր, բոց, դժոխ, տանջանք անբաժան ահա քեզ բաժին, միշտ և յափուեան» (եր. 31). ընդհակառակը նա սաստիկ քնքոյց է, երբ խօսքը երեխայի մասին է. նա զիտէ որ «լացի պատճառը միայն կաթն է և մօր քաղցրիկ չաղ ստինքներ», բայց նա զիտէ նոյնպէս, որ երեխան ոչ միայն կաթ է ուտում, այլ և ուտելուց յետոյ ուրիշ պէտքեր էլ է ըդ-

գում, և երբ երեխան կշտանալուց յետոյ նորից լաց է լինում, բանաստեղծը մեզ բացարում է, թէ «նա», (հէնց այդպէս բռնով և ստորակէտով) մի ուրիշ հոքս էլ զգաց»...

Լաւ դայեալ կը լինէր պ. Բաղդասարեանը և եթէ նա դրա փոխարէն դարձել է վատ բանաստեղծ, մեղաւորը հայրն է, որ հեղինակի փոքր ժամանակը ամեն բան ասել է նրան (տես «Հայրս միշտ ինչ էր ասում մանուկ ժամանակս», եր. 12—15), բայց մոռացել է ասել, որ երեխայի «ուրիշ հոգսերը» ամենամբանատեղծական բանն են աշխարհում և որ կան բառեր, որոնց իրարից ստորակէտով բաժանելը նոյնքան մեղք բան է, որքան մարդուն կնոջից բաժանելը: Հայրը մոռացել է այդ ասել և ահա պ. Բաղդասարեան մեզ զբաղեցնում է երեխայի ստամբքային հարցերով և ստորակէտի գործածութիւնը հացցնում է մոլեռանդութեան: Երեսակայեցէք. «...որ քո շրթունքներ, արտասանէին, սուրբ սիրոյ խօսքեր». «Այժմ՝ կեանքիդ, ուրախ օրեր, քեզ ժպտում են, անդադար» «Եւ ես, հաւատում էի». «Դէպի յառաջ եմ, միշտ դիմումն. և այն և այն:

Ես այդքան կամք առայ այդ, անմիտ գրքոյկի վրայ, որովհետեւ, ինչքան ինձ յայտնի է, նրա մասին չէ խօսւել ոչ մի տեղ, և, որ զիխաւորն է, նա շատ բնորոշ է մեր գրականութեան համար: Կան հոգեբանական հարցեր, որ հոգեկան հիւանդների վրայ պէտք է ուսումնասիրել,—որոշ, ընդհանուր պակասութիւններ նրանց մէջ արտայայտուած են լինում տիպային ձևով:

Գրեթէ նոյնքան անդրագէտ է գրուած և պ. Գ. Զառաֆեանի «Ասկեհներ տղան և իմաստուն աղջիկը» հեքեաթը, որի մասին աւելորդ է խօսել:

Անաջող գրուածք է և պ. Ժառանակէսի «Նիսիա» վօգըվիլը, որ սակայն գրուած է գրագէտ լեզուով:

III

Տեսնենք այժմ, թէ ինչ են տուել մեզ պարբերական հրատարակութիւնները գրական տեսակէտից:

Սկսենք հին «Մուրճ»-ից, որովհետև «Մուրճը» միակ գրական ամսագիրն է, որ հրատարակւում է ուսահայ բարբառով, խոկ զուտ գրական նիւթ ամենից շատ պէտք է պարունակուի գրական ամսագրում:

Խօսք «Մուրճի» անցեալ շրջանին է վերաբերում, երբ նա ուրիշ խմբագրութեան ձևորին էր և ունէր ուրիշ բարոյական կերպարանք, ուստի և այժմեան «Մուրճում» նրա մասին խօսելը չը պէտք է անյարմար համարուի:

«Մուրճի» հին խմբագրութիւնը 1900 թուին հրատարակեց միայն վեց կամ, աւելի ճիշտ ասած, հինգ համար, որովհետև մայիս-յունիսեան միացեալ գրքոյկը ծաւալի կողմից քիչ տարբերութիւն ունի ոչ-միացեալ համարներից: Այդ հինգ կամ վեց տեսրերում կան ինքնուրպյան վիպական գրուածքներ և ամեն տեսակ ոտանաւորներ, որոնք բաւական տեղ են բռնում, բայց բոլորն էլ բացի պ. Պ. Պոչեանցի «Յունօ»-ից, որ գեռ չէ վերջացել և որի մասին խօսել վաղաժամ ենք համարում, այնքան քիչ գեղարուեստական արժեք ունեն, որ, մեր կարծիքով, կը մնան ընդ միշտ թաղուած «Մուրճի» տեսրերում:

Այդ անաջող գրուածքներից քննադատութիւնից ցած չեն, իմ կարծիքով, միայն պ. Լ. Մանուէլեանի ոտանաւորները, որոնք, ինչ պակասութիւն էլ ունենան, երբէք զուրկ չեն լինում իմաստից և միշտ լիովին գրականական են:

Պ. Լ. Մանուէլեանը հին «Մուրճի» վերջին տարուայ գրքոյիներում ունի միայն երկու բանաստեղծութիւն՝ «Ես ձեզ ասում եմ» (№ 3) և «Սողոմոնի աղբիւրը» (№ 4):

«Ես ձեզ ասում եմ... ոտանաւորի մէջ կայ և համակրելի գաղափար, և չափ, և յանդ, բայց չը կայ զգացմունք, չը կայ տրամադրութիւն, չը կայ պատկեր, այսինքն այն, առանց որի ոտանաւորը «ճնշող պղինձ» է միայն:

«Սողոմոնի աղբիւրը» հեղինակը անուանել է զրամատիկական պօէմս երեք պատկերով, բայց մէջը ոչ զրամատիկական գործողութիւն կայ, ոչ պօէմայի տրամադրութիւն և ոչ էլ որ և է պատկեր, այլ միայն անվերջ վիճաբանութիւններ և ճառեր այնպիսի մի հարցի մասին, ինչպէս մի գիւղ աղբիւր բերելու հարցն է, որ չը նայելով իր ամբողջ կարևորութեանը գիւղացիների շահերի տեսակէտից, չէ կարող նիւթ տալ զրամատիկական գրուածքի համար: Աւելացրէք դրա վրայ և այն, որ պ. Մանուէլեանի հայ գիւղացիները խօսում են Արքայ Լիրի և Օտելլօյի ոճով, և ձեզ հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ «Սողոմոնի աղբիւրը» տպասորութիւն չէ գործում, չը նայելով որ գրուած է գեղեցիկ և ազատ անյանգ ոտանաւորով:

Իսկ պ. Աւետիք Խսահակեանը, որ մի ժամանակ յոյսեր էր տալիս, այժմ, գրաւուած գէկաղէնտութեամբ, աշխատում է ապացուցանել, որ սխալուած են եղել իր ձիրքի մասին լաւ կարծիք յայտնողները: Փոխանակ զգացմունք կամ պատկեր արտայայտելու, պ. Խսահակեանը զրագուած է այժմ զրականական ծօնգիւօրութեամբ, խաղում է ժողովրդական գեղեցիկ, կարծ և մասնաւանդ զուգորդ խօսքերով և թխում է ոտանաւորներ, որոնք կամ անհասկանալի ցնորաբանութիւններ են կամ վերին աստիւ-

ճանի քաղցր-մեղքը արտայայտութիւններ շինծու վշտերի; իբր ցնորաբանութեան մի նմուշ՝ մենք յարձնարարում ենք ընթեր-ցողներին պ. Խսահակեանի «Երազ»ը (№ 3), որ կազմուած է իրար յաջորդող ոտանաւոր և արձակ տուներից, կամ նրա «Տիե-գերական զանգը», որից խմանում ենք, թէ պ. Խսահակեանը լուռ թափառում է «ապատում և անապատում», «հոգին ծանրացած», բայց «տեմնում է», որ «տիեզերքը մի անհուն զանգ է» և իր հո-գին ճարա լեզուակը փսեմ և լսում է, որ «վեհ լուռթեան մէջ» «տիեզերքը խոր զօղանջում է» և ահա այդ «տիեզերական զան-գի» «փսեմ լեզուակը», այսինքն պ. Խսահակեանի հոգին, չնոր կտակներով, նոր պատգամներով, «գահավիժուում է դէսի ամ-բոխի հոգին, նրան խայթելու, և քարոզելու, և արտասուելու, և այրուելու...»

Վիպականների մէջից չնորհօվ բան կարող էր լինել պ. Ա. Աթայեանի պատկերը («Անցեալից մի բեկոր» № 5—6), եթէ հեղինակը գրէր պարզ կերպով և չաշխատէր պօզաներ ընդու-նել: Տեղ-տեղ պատկերում դուք զգում էք արամադրութիւն, սկսում էք կենդանի կերպով երեակայել հեղինակի նկարա-գրածը, բայց իսկոյն տպաւորութիւնը փոխում է, սկսում են շինծու շեշտեր: Շինծու է հէնց պատկերի սկիզբը. «Չեզնից ով է գիշերել դուրսը, զինջ օդի, յովիսեան պարզ երկնի տակ (մինք ենք ստորագծում): Ասում են՝ բանաստեղծութիւնը դատարկա-բանութիւն է. ճշմարիտ, այդպէս ասողները իսկի չեն գիշերել դուրսը, զինջ օդի, յովիսեան պարզ երկնի տակ. եթէ նրանք գիշերած լինեին դուրսը, զինջ օդի» և այլն:

Վաս փաստաբան կը լինէր պ. Աթայեանը,—այդ ոճով գրելով նա հէնց հաստատում է, որ բանաստեղծութիւնը դատար-կաբանութիւն է, և յիրաւի, հին «Մուրճի» 1900 թուի ինքնու-րոյն գեղարուեստական գրուածքների բաժինը, ընդհանուր առ-մամբ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ յաւակնոտ դատարկաբանութիւն:

IV

Երբ խօսում են գեղարուեստական գրականութեան մա-սին, առհասարակ շատ քիչ են ի նկատի ունենում լրագիրները, որովհետեւ նրանց էական նիւթը հրապարակախօսական հարցեր են, օրուայ չարիքները:

Անցեալ տարրուայ ընթացքում «Մշակում» պ. Լէօն գրել է միայն երկու պատկեր՝ «Հայրծն» և «Այցելուն», իսկ պ. Ահա-րոնիանը միայն մի պատկեր և երկու պատմուածք՝ «Արձանի մօտ», «Ցաւը» և «Մարդագէլը»:

Պ. Լէօի «Հայրօն» և «Այցելուն» տօնօրեան—Ծննդեան և Զատկի—պատկերներ են, որոնք, ընդունուած սովորութեան համաձայն, ֆանտաստիկական են լինում: Պ. Լէօն չէ սիրում ֆանտաստիկականը: Նա շատ է կապուած իրական հողի հետ, նա չէ մոռանում երբէք առօրեայ կամ, աւելի ճշտ առած, հանապազօրեայ ցաւերը և նրա բէալիստ ու դեմօկրատ տաղանդը տօնից վերցնում է ոչ թէ նրա ուրախութիւնը, նրա անհոգութիւնը, այլ այն թշուառութիւնը, որ աւելի ևս աչքի է ընկնում այդ ուրախութեան կողքին, և այն ստուերը, որ աւելի ևս թանձրանում է տօնօրեայ ճրագների վառ լուսաւորութիւնից այն տեղերում, ուր չէ ընկնում նրանց լոյսը: Իսկ որքան շատ են այդ տեղերը և որքան լաւ ծանօթ հեղինակին: Պ. Լէօն շատ լաւ զգում է առօրեայ, դժգոյն, անէֆֆէկտ թշուառութիւնը և կարողանում է շատ բնական և ճշմարիտ շեշտով արտայացել այդ թշուառութեան դայրովը աշխարհիս բախտաւորների դէմ:

Պ. Աւ. Սհարոնեամն էլ դէմօկրատ է ոգով, նրա տաղանդն էլ սիրում է թշուառութիւնը, բայց բանաստեղծական, հերոսական և մի քիչ էֆֆէկտաւոր թշուառութիւնը, և եթէ նրա ոսքերը այնքան պինդ չեն կանգնած իրականութեան հողի վրայ, որքան պ. Լէօնինը, գրա փոխարէն նա ունի թոփշքներ դէպի եթերը, որոնք, երբ ածողում են, մի ինքնուրոյն հրապոյը են տալիս նրա գրուածքներին:

Պ. Լէօն բէալիստ է, պ. Ա. Սհարոնեանը՝ րօմանտիկ: Մէկը գրաւում է զգացմունքի ոյժով, միւսը զգացմունքի գեղեցկութեամբ:

Երկուսի տաղանդն էլ հաւասարապէս գաղափարական են և վերին աստիճանի ողջախոն:

Այն բէլլէտրիստական գրուածքները, որ պ. պ. Լէօ և Ահարօնեան տպել են անցեալ տարրուայ ընթացքում, չէ կարելի ամենաաջողները համարել նրանց գրածների մէջ, բայց այնուամենայնիւ նրանք կարդացւում են հետաքրքրութեամբ և զուրկ չեն մեր վերը յիշած արժանաւորութիւններից:

«Մշակի» մասին այդ տեսակէտից մեր խօսքը վերջացնելու համար մինք պէտք է յիշենք պ. Համարի «Շուրա» երգիծաբանական պատկերը և պ. Գ. Բաշինջաղեանի «Ազնուականի յիշատակարանից» պատմածքը:

«Շուրան» մի թեթև պատկեր է, բայց նրա թեթև գծերումն էլ երևում է վարժ և տաղանդաւոր վրձին: Պատկերը գրուած է Թիֆլիսի բարբառով և,—ինչպէս հասկացողները ա-

սում են—այնպէս, ինչպէս շատ քչերը գիտեն օգտուել այդ բարբառից:

Երգիծաբանական է և պ. Բաշխնջաղեանի պատմածքը, որ կարգացում է հետաքրքրութեամբ և թափանցուած է նոյն քնչութեամբ, որ պ. Բաշխնջաղեանը այնքան չորհալի կերպով արտայայտում է իր նկարներում:

V

«Տարազ» շաբաթաթերթում տպուել են անցեալ տարի, ի միջի այլոց, երկու մինչեւ այժմ անտիպ ոտանաւորներ. մէկը Գամառ-Քաթիպայի «Տեսչութիւն վերին» (№ 9), որ արուեստակուած կամ, աշխարհաբար ասած, թիսած ոտանաւոր է. միւս՝ Միք. Նալբանդեանի «Տեղի տան տիրութիւնք» (№ 10), որ գրաբար է գրուած և, իմ կարծիքով, բոլորպին զուրկ չէ այնուամենայնիւ գրական արժանաւորութիւններից:

Կենդանի գրողների գրուածքներից «Տարազում» ամենահետաքրքրականը Պերճ Պոչեանցի պատմածքն է՝ «Ողջ կեանքն ուրիշին, մի օր իրան» (№ № 20—23), որ աչքի է ընկնում հեղինակին յատուկ արժանաւորութիւններով և պակասութիւններով։ Պ. Պոչեանց չէ պատկերացնում, այլ լուսանկարում է, և նրա գրուածքները յաճախ տալիս են ձեզ գեղարուստական ձևմարտութեան տեղ լոկ արձանագրութիւն, պրօտօկօլ, և ներքին տրամաբանութեան տեղ՝ պատահական կապակցութիւն։ Այդ է պատճառը, որ հեղինակին յաջողում է զիմանական վերարտագրել կեանքի արտաքին կողմը, նիստ ու կացը, սովորութիւնները, և գժուար է յաջողում թափանցել մարդկանց անհատական հողերունութեան մէջ։ Եւ ճիշտ ասած, Պ. Պոչեանցին շատ քիչ է հետաքրքրում այդ հոգեբանութիւնը։ Նա ուզում է արտայայտել ժողովրդական մի հայեացք ժողովրդական ոճով, և նա արտայայտում է գործող անձնաւորութեան բերնով միենոյն է, մահուան անկողնում լինի այդ անձնաւորութիւնը թէ իր կեանքի ամենաուրախ բողէում, բոլորովին նոյնատեսակ բառերով, նոյն իսկ երբեմն կտառակելով իրար վրայ մի քանի համանը դարձուածքներ, որոնցից իւրաքանչիւրը իրական կեանքում բաւական է համարում այդ միտքը արտայայտելու համար։ Այդ բանը, ի հարկէ, առանձին հետաքրքրութիւն է տալիս Պ. Պոչեանցի գրուածքներին լեզուաբանական տէսակէտից, որովհետեւ դըժուար է այժմ գանել մի գրող, որ նրանից լաւ իմանայ մեր հիմնական, արարատեան բարբառը, բայց շատ վեասում է նրանց գեղարուեստական տեսակէտից, մայնելով նրանց մէջ և անբնա-

կանութիւն, և ճապաղութիւններ։ Աւելորդ է ասել, որ իբր պրօտօկօլիստ պ. Պոչեանցը յարում է գրականութեան նատուրալիստական դպրոցին և երբ նկարագրում է մէկի, զիցուք, հագուստը, բաց չէ թողնում ոչ մի կոճակ, ինչպէս, օրինակ, «Տարագում» տպուած պատմածքում կարծում է, թէ հետաքրքրական է ընթերցողների համար իմանալ, թէ որքան լայն էր պատմածքի հերոս դրդողան (հերմաֆրօդիտ) Օհանի վարտիքի ձագը։

Պ. Պոչեանից յետոյ յիշելու է պ. Վրթ. Փափաղեանին, որ տպել է «Տարագում» հինգ պատկեր—«Ըմբռոստի մահը» (№ 9), «Քարոտ կրծքի երգը» (№ 15), «Մաղձերնիդ մի խառնէք» (48), «Զայներդ կարէք» (№ 49) և «Թաղիքից գլխարկ հանեթ» (№ 50); Առաջին երկուսը, որոնց մէջ զգացուում են նիշշէական հովեր և գէկաղէնստութեան չորշոփ, բնականաբար կարող են հետաքրքրաբութիւն ներկայացնել միայն մի ընթերցողի... իրան, հեղինակի համար, որովհետև այդպիսի բաները բարձր են սովորական մահկանացուների—իրանց սեփական գլխի վրայից ցատկելու ցանկութիւն չունեցող ընթերցողների—հասկացողութիւնից; Վերջին պատկերը հասկանալի է, բայց պասկվիլի տպաւորութիւն է գործում։ Վատ չեն մնացած երկու պատկերները, որոնք «Անմահացնելու գործեր» ընդհանուր վերնագիրն են կրում։ Լաւ է մանաւանդ զրանցից երկրորդը,—«Զայներդ կարէք»,—որ գըրուած է բնուրոցն ու աշխայժ ոճով և համակրելի իւմօրով։

Ա. Խահակեանը «Տարագում» էլ զբաղւում է գրական ժօնզիերութեամբ։ Ահա մի բնորոշ նմուշ.

«Ի՞նչ էլ որ լինիմ, ի՞նչ էլ որ լինիմ, —

Ալքատ էլ լինիմ, մարդ եմ էլի ես.

Ինչու նամարդին գլուխ վեր բերեմ,

ի՞նչ էլ որ լինիմ, թէկուզ ի՞նչ լինիմ»։

Շատ բան ունի զրած «Տարագում» պ. Զաւադ Բալուղեան կամ, ինչպէս ինքը սիրում է ստորագրել՝ Զաւադ-բէկ Բալուդեան, որի բանաստեղծական չնորհքի և ճաշակի մասին կարող է գաղափար տալ նրա ոտանաւորներից մէկի հետեւալ բնաւանը։

«Կողնուն դըրին խալիչին,

Թոլլաւ, ընկաւ գետինին» (№ 31).

Ժողովուրդը ասում է.

«Կողնուն դըրին խալիչին,

Թոլլաւ, ընկաւ գետինին»;

Բանաստեղծ Զաւադ-բէկ Բալուղեան այդ առածը խմբա-

գրել է իր ոճով, հակառակ բանաստեղծութեան և նոյն իսկ քերականութեան տարրական պահանջներին:

Մեր երիտասարդ բանաստեղծներից մի ուրիշը, —պ. Յ. Յովհաննիսիսեան, որ տաղանդաւոր բանաստեղծական թարգմանիչ կարող էր լինել, բայց դարձել է տօնորեայ ոտանաւորներ թիող, մի թոյլ ոտանաւոր է նուիրել պ. Յ. Մանդինեանին «Տարազի» № 9-ում:

Դրանով վերջացնում ենք մեր խօսքը «Տարազին» անցեալ տարի աշխատակյած գրողների մասին: Միւս գեղարուեստական գրուածքներից արժէ յիշել պ. Ռուփրիս Անոփեանի «Ծովի վիշտը» (№ 2), պ. Հրանտ-Վահեի «Մակոյկիս մէջ» (№ 36) և օր. Ջ. Ալեանպի «Ով աստղեր, աստղեր» (№ 44) քնարերգական ոտանաւորները, որոնց մէջ զգացւում է անկեղծ տրամադրութիւն, արտայայտուած գեղեցիկ ձեռվլ, պ. Մ. Տէր-Դանիէլեանի «Թումօ» պօէմայի սկիզբը (№ 43), որ չնորհալի, բայց անփորձ հեղինակի գրուածք է թումօ, և վերջապէս պ. Աթոսի երկու պատմածքները, —«Տէր Սուրեաս» (№№ 16—17) և «Տէր Եղեազ», —որոնք աչքի են ընկնում մի քիչ կոպիտ, բայց ձշմարիտ իւմօ-րով և հիւթալից ու գունաւոր, թէն անմշակ ոճով:

Մնացածը, —մի քանի բացառութիւններով, որոնք գրական արժանաւորութիւններ չունենալով, այնուամենայնիւ հեշտ ընթերցանութեան նիւթ կարող են ներկայացնել — կամ գէկադէնտական զառանցանքներ են, պ. Միք. Խարայէլեանի «Կուրի ափին ցնորում եմ»-ի նման (№ 28), կամ այնպիսի բաններ, որոնք գրագէտ խմբագրութիւնների մէջ իրանց տեղը գտնում են զամբիւղի խորքում:

«Նոր-Դարի» անցեալ տարուայ համարներում մեր գեղարուեստական գրողներից հանդիպում ենք միայն պ. Պոչեանցին, որ այդ լրագրի մի քանի համարներում տպել է մի «աւանդութիւն» «Եօթն եղբօր գերեզմաններ» վերնագրով: Հեղինակը երկար ու բարակ, ինչպէս ինքն ասում է, նաով է անում այդ աւանդութիւնից և ի վերջոյ ստացւում է մի թոյլ վէպիկ, որ սակայն հետաքրքրական է իր մանրամանութիւնների մէջ:

«Լումայ» վեցամսեայ հանդէսի անցեալ տարուայ երկու գրքովների մէջ մենք գտնում ենք դարձեալ պ. Պոչեանցի «Կնունք» վէպիկը և պ. Յարութիւն թումանեանցի «Մելիք-իւսուֆ» պատմական պօէման:

Պ. Թումանեանցի պօէման կարդացւում է հետաքրքրութեամբ և կարող էր համարուել մի գրուածք առանց մնձ արժանաւորութիւնների, բայց և առանց մեծ պակասութիւնների, այսպէս ասած՝ բեզ օօօիք պրմետե, եթէ հեղինակը երբեմն

երբեմն չը մեղանչէր հայոց լեզուի և չափարերական արուեստի կանոնների դէմ: Պատահում ենք նոյն իսկ ամբողջ տուներ, ու բոնք այդպիսի մեղանչումների մի շարք են. օրինակ ԽIII-րդը.

«Ամուսնու մահուան ցաւն ու կոկիծը
Դեռ չէր փարատուել նրա սրտիցը,
Երբ նենդ, ընչափաղց թամրաղը դաժան՝
Շլացած փառքով մշարնջենական (?)՝
Յափշտակել էր, կողոպտել եղբօր
Գոյքը սեփական, բարիքը բոլոր,
Հալածանքների մատնել իւսուփին,
Հարստահարում, ընկերում որբին:
Իւսուփի կեանքը թամրազի համար
Անտանելի էր, գառնագին իսպառ»:

Գեղեցիկ է մանաւանդ այդ ընկերումը:

«Թարգմանչի անցեալ տարուայ գրքովկում առաջին անգամ
տպուած է մի հին գրամա, պ. Մուրացանի «Մուզանը», որի
մասին պ. Լ.-ի կարծիքը տպուեց «Մուրճ» № 3-ի մատենա-
խօսական բաժնում:

VI

Գեղարուեստական թարգմանական դրականութիւնը նոյն-
պէս հարուստ չէ եղել անցեալ տարի: Ոչ մի կլասիկական զը-
րուածք չէ թարգմանուել անցեալ տարի. չէ թարգմանուել նոյն
իսկ ոչ մի մեծ գրուածք, եթէ չը հաշուենք Կամիլ Ֆլամարիո-
նի «Ուրանիա» աստղագիտական վեպը, որ թարգմանել է ֆրան-
սերէնից պ. Հ. Առաքելեանը, և Խօզէ էլեգարայի «Մարիանա»
գրաման, որ թարգմանել է պ. Սրոչն Կրասիլնիկեանը:

Ոչ գեղարուեստական գրուածքներից տարեկան տեսու-
թեան մէջ յիշուելու արժանի են անցեալ տարի հրատարակիուած-
ներից միմիայն հետեւեաները—Սրբստակէս արքեպիսոկոպոս
Սեղրականի «Քահանայական ինդիքը» (տես «Մուրճ» № 1).
2) պ. Լէօի «Հայկական Տպագրութիւնը» (տես «Մուրճ» № 3).
3) պ. Երուանդ Շահազիզի «Մկրտիչ էմին». 4) պրօֆ. Վինօ-
դրադօվի «Դասագիրք ընդհանուր պատմութեան. մասն III. Նոր
Դար». պ. Նիկ. Քարամեանի թարգմանութեամբ (տես «Մուրճ»
№ 3). 5) պ. պ. Կ. Կուտիկեանցի և Լ. Սարգսեանցի «Մայրէնի
խօսք» ձեռնարկը, որ, ազատ չը լինելով պակասութիւններից,
այնուամենայնիւ բարձր է մինչև այժմ հրատարակուած նոյնա-
նման ձեռնարկներից, և 6) պ. Լ. Սարգսեանցի «Հին ցաւ», որի

մէջ պարունակուած յօդուածներում,—որոնք արտատպուած են «Մշակի» 1895—98 թուականների համարներից, բայց որոշ յաւելուածներով,—հեղինակը իրան յատուկ ուժեղ ոճով արտայայտում է, իմ կարծիքով, ամենաձիշտ հայեացքը մեր «Հին ցաւի»—հոգեոր դասակարգի մասին:

VII

Ահա և ոռւսահայերիս գրականութեան անցեալ տարուայ հաշուեկշիռը: Ողորմելի հաշուեկշիռ, կ'ասէք ի հարկէ: Բայց զարմանալի կը լինէր, եթէ այդպէս ըլ լինէր:

Մեր գրականութիւնը նոր ակտուող գրականութիւն է, նա չունի հարուստ անցեալ, նա չունի բարոյական գրամագլուխ և այդ պատճառով ամբողջապէս կափուած է ներկայ հասարակական պայմաններից: Իսկ ինչ բարեյաչող պայմաններ է ներկայացնում այժմ ոռւսահայ հասարակութիւնը գրականութեան զարգացման համար:

Որպէս զի մի հասարակութեան գրականութիւն ծաղկի, պէտք է որ այդ հասարակութիւնը ներկայացնի մի քաղաքակիրթ ամբողջութիւն, որի մասերը սերտ կապուած լինէին միմեանց հետ ընդհանուր մտաւոր և բարոյական ինտէրէսներով, շահերով:

Ոռւսահայերում հասարակութիւնը, ի հարկէ, փոքր ինչ քաղաքակրթուել է անցեալի համեմատութեամբ, բայց նա քաղաքակրթուել է միմիայն արտաքին կողմից: Նրա մէջ ակաել է մուտք գործել կուլտուրան, այսինքն այն քաղաքակրթութիւնը, որ չափում է սապոնի գործածութեան աւելանալովը, բայց նա դեռ չէ դարձել քաղաքակրթուած հասարակութիւն այդ բառի բարձր նշանակութեամբ, նրա մէջ դեռ մուտք չէ գործել ցիլինդրիկացիան, այսինքն այն քաղաքակրթութիւնը, որ չափում է մտաւոր հորիզոնների լայնութեամբ, բարոյական պահանջների ոյժով, գեղեցկագիտական ձաշակի զարգացմամբ և ընդհանուր ձգտումների, իշձերի և երազների վսեմութեամբ, այսինքն այն բոլորով, որի արտայայտութիւնն է իսկապէս գրականութիւնը:

Բայց այդպիսով, կ'առարկն գուցէ ինձ, մենք ընկնում ենք՝ մի տեսակ կախարդուած շրջանի մէջ: Եթէ բարոյական շահեր, մտաւոր պահանջներ, վսեմ ձգտումներ չը կան, մենք առում ենք, թէ գրականութիւնը չէ կարող զարգանալ, բայց չէ որ հէնց ինքը գրականութիւնն է, որ զարգացնում է հասարակութեան մէջ այդ պահանջները:

Այդ ճիշտ է։ Եւ ինչքան էլ աղքատ լինի մեր գրականութիւնը, նա այնուամենայնիւ աշխատում է զարթեցնել այդպիսի պահանջներ, բայց որպէս զի նրա գործը յաջող գնայ, պէտք է, որ այդ գրականութեամբ հետաքրքրուողներ լինեն, իսկ այդպիսի հետաքրքրուողներ մեզնում շատ քիչ են։

Տ. Յ.